Գալստյան Վարդան[1]

Արևելյան Այսրկովկասի թյուրքական ցեղերը ԺԹ դարում

19-րդ դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասի թյուրքական ծագմամբ բնակչության շրջանում ցեղային պատկանելության շեշտումն աստիճանաբար վերանում էր, քանի որ թյուրքախոսները զանգվածաբար քոչվորական կենսակերպից անցում էին կատարում նստակեցության: Ցարական իշխանության պաշտոնական տվյալների համաձայն՝ 19-րդ դ. վերջում Այսրկովկասի «թաթարների» մեծ մասը դարձել էր նստակյաց, իսկ փոքր մասը վարում էր կիսաքոչվորական կյանք[2]:

Պաշտոնական տվյալներով՝ 1856 թ. Արևելյան Այսրկովկասի զգալի մասը ներառող Շամախիի նահանգի բնակչության միայն 21,3 տոկոսն էր (100 հազ. մարդ) քոչվոր: 1886թ. Բաքվի նահանգում քոչվոր էր բնակչության 7,1 տոկոսը, Ելիզավետպոլի նահանգում՝ 2,8 տոկոսը[3]:

Այսրկովկասի թյուրքախոս թաթար բնակչությանը նստակյաց դարձնելը Ռուսական կայսրության քաղաքականության գլխավոր նպատակներից էր: Այս քայլը դիտվում էր որպես երկրամասում ռուսական վարչական համակարգն ամրապնդելու կարևոր միջոց. բացի այդ քոչվորական կենսակերպը խոչընդոտում էր Այսրկովկասի տնտեսական զարգացմանը[4]:

19-րդ դարի վերջում հարևան ժողովուրդները, եվրոպացիներն ու ռուսները Այսրկովկասի թյուրքախոսներին հիմնականում անվանում էին թաթարներ, Կովկասի թաթարներ, թուրքեր և այլն[5]:

Երկրամասի թյուրքախոսների շրջանում որպես ընդհանրական ինքնավանում տարածված էր «մահմեդական» եզրույթը, որը դեռ ընթացող էթնոհամախմբման և միասնական էթնանվան բացակայության պայմաններում առաջնային դիրք էր մղում կրոնական պատկանելությունը:

Աստիճանաբար մոռացվող ցեղային անվանումները պահպանվում էին հիմնականում դեռևս քոչվոր կենսակերպ վարողների մոտ, նաև Արևելյան Այսրկովկասի տեղանուններում: Օր.՝ Արևելյան Այսրկովկասի տեղանունների մի մասի դեպքում պահպանվել էին ոչ միայն Կարա-կոյունլու ցեղային միության

---

[1] Հոդվածը լույս է տեսել «ԳԱՐԴՄԱՆԻ ԵՒ ՇԻՐՎԱՆԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԸ (պատմություն եւ արդիականություն) Հանրապետական գիտաժողով (Երեւան, 29-30 ապրիլի, 2016): ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ ԵՒ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ», ժողովածուում, Երևան, 2016, էջ 33-59:

[2] Алфавитный список народов, обитающих в Российской Империи, СПБ., 1895, с. 69.

[3] Народы Кавказа, т. П, Москва 1962, с. 72.

[4] Հմմ. Народы Кавказа, т. II, с. 72.

[5] Первая всеобщая перепись населения Российской империи 1897г., Вып.1 , СПБ., 1897; Число церквей и прихожан православных, армяно_григорианских и магометанских, по сведениям 1884г., - Кавказский календарь на 1887г., с. 222; Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893; Алфавитный список народов, обитающих в Российской Империи, СПб., 1895, с. 68.

առանձին ցեղերի անուններով տեղանուններ, այլև հենց Կարակոյունլու անունով բնակավայրեր։ Օր.՝ Նուխիի գավառում 1414 բնակիչ ընդգրկող Կարակոյունլու գյուղական համայնքը[6] կամ Շամախիի գավառի Կարակոյունլու գյուղական համայնքը 584 անդամով[7]։

Ստորև կփորձենք ներկայացնել այս տարածաշրջանի թյուրքական ծագմամբ բնակչության էթնիկական հիմքը կազմած հիմնական ցեղերի, ցեղամիավորումների (այրում, շահսևան, փադար, բայաթ, շամլու, ալփաուտ, ռումլու, կենգերլի, մուղանլու և այլն) համառոտ պատմությունը, Այրկովկասում հայտնվելու մոտավոր ժամանակը, բնակության վայրերը։ Դրանց մի մասի դեպքում պահպանվել են միայն կցկտուր տեղեկություններ, իսկ մեծ մասի պարագայում առկա են ծագման ու Այսրկովկասում հայտնվելու մի քանի վարկածներ։

Արևելյան Այսրկովկասում բնակություն հաստատած թյուրքական նշանակալից ցեղերից է *Փադարը,* որը սերում էր օղուզական Կայ կամ Կայի ցեղից[8]։ Կայի ցեղն իր հերթին համարվում է Օղուզից սերող գլխավոր 24 ցեղերից մեկը[9]։ Մոնղոլական արշավանքների ժամանակ փադարները Միջին Ասիայից նախ տեղափոխվել են Ատրպատական։ 16-րդ դարում իշխանության համար պայքարում նրանք անցել են ղզլբաշների կողմը և Սեֆյան Իրանի քաղաքական կյանքում ակտիվ դերակատարություն ունեցել։ Հայտնի է, որ փադարներին Արևելյան Այսրկովկասի հյուսիս-արևմտյան հատվածում բնակեցրել են Սեֆյանները։ Իրենց հավատարիմ թյուրքական այս ցեղին բնակեցնելով լեզգիաբնակ շրջաններում՝ Պարսից շահերը ցանկանում էին դրանով հնազանդեցնել լեզգիներին[10]։ Ժամանակի ընթացքում փադարները տարածվել են ամբողջ Արևելյան Այսրկովկասում։

19-րդ դարում Ջևաթի գավառում (ուեզդում) բնակվում էր փադարների 218 ընտանիք[11]։ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Փադար անունով բնակավայրեր պահպանվել էին Ղուբայի, Գյոքչայի, Ջևաթի, Աղդաշի, Շամախիի, Նուխիի, Արեշի գավառներում[12]։ Արեշի գավառի Ղարադաղլի- Փադար կոչվող գյուղական համայնքում

---

[6] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Нухинский уезд, Тифлис, 1893.

[7] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[8] Г.Д.Агаев, Данные этнотопономии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., - В сб.: Этническая ономастик", Институт этнографии им. Н.Миклухо -Маклая АН СССР, Москва, 1984, с. 148; М.Велили (Бахарлы), Этнография Азербайджана, -В сб.: Азербайджан и азербайджанцы в мире, № 2, Народы Азербайджана, Азербайджан 2009; http://ethnoglobus.az/.

[9] Рашид ад- Дин, Сборник летописей, т. I, кн. I, Москва, 1952, с. 88.

[10] М.Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/ , История Азербайджана, т. I, Баку, 1958, с. 266. http://ethnoglobus.az/.

[11] Г.А. Гейбулаев. Топонимия Азербайджана (историко_этнографичекие обозрение), Баку,1986, с. 30.

[12] Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, том VII, Тифлис, 1887, с. 359; М.Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/

բնակվում էր մոտ 1200 թաթար բնակիչ[13]: Ջեբրայիլի գավառի Փադար գյուղում 1886թ. դրությամբ ապրում էր 72 մարդ[14]: Ջևաթի գավառի Փադար անունով համայնքում բնակվում էր 1932 մարդ[15]: Ղուբայի գավառում Փադար-Շաբրան անունով բնակավայրն ուներ 152 բնակիչ: Փադար և Արմուդի- Փադար գյուղերը միասին ունեին 211 բնակիչ[16]: Շամախիի գավառում հիշատակվում է Փադար- Գյուլմալի համայնքը՝ 546 բնակչով[17]:

Այրումների կամ այրումլուների ծագումը վերջնականապես բացահայտված չէ: Այսրկովկասում այրումների հայտնվելու վերաբերյալ տարբեր վարկածներ կան, որոնցից յուրաքանչյուրը կապվում է «այրում» բառի ստուգաբանության հետ: Վարկածներից մեկի համաձայն՝ այրումների նախնիները Այսրկովկաս են եկել Փոքր Ասիայից 14-րդ դ. սկզբում, երբ Իլխանների պետության հետ պայքարում կործանվեց Փոքր Ասիայում Իկոնիայի կամ Ռումի սելջուկյան սուլթանությունը: Այս տեսակետի կողմնակից հայտնի ժողովրդագետ պատմաբաններ Իվան Շոպենն ու Մամեդհասան Վելիլին «այրում» էթնանունը ստուգաբանում են որպես նախնական «էլ ռում», որը հետագայում հնչյունափոխվել է[18]: Հայտնի է. որ արաբները, հետո նաև սելջուկները Ռում (Հռոմ) էին կոչում Բյուզանդիան (Սելջուկյան տիրապետության տակ նրա տարածքների անցնելուց հետո էլ երկար ժամանակ Փոքր Ասիան կոչվում էր Ռում, իսկ այստեղ ձևավորված Իկոնիայի սուլթանությունը՝ Ռումի սուլթանություն): Փոքր Ասիայից Այսրկովկաս՝ ավելի ստույգ Գանձակ և Արցախի տարածք գաղթածներին տեղի ավելի վաղ շրջանի թյուրքախոսները կոչեցին «էլ ռում», որը նշանակում էր «ռումից եկած» կամ «ռումից սերող». այս վարկածի համաձայն՝ հետագայում այրումների մի մասն անցել է Ատրպատական և ստացել շահսևան անունը[19]: 19-րդ դարի առաջին կեսի գործիչ Աբասկուլի-աղա Բաքիխանովը ևս այրումների ծագումը կապում է Փոքր Ասիայից բերված թյուրքական ցեղերի հետ, իսկ «այրում» բառը նույնացնում «էլ ռում» անվան հետ[20]:

Մեկ այլ վարկածի համաձայն էլ՝ այրումների նախնիներն Այսրկովկասի տեղաբնիկներ են: 20-րդ դ. սկզբում այրումներին ու նրանց կենցաղն ուսումնասիրած ժողովրդագետ Ք. Քարաքաշլին նշում է, որ այրումները շատ են տարբերվում

---

[13] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

[14] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

[15] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

[16] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[17] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[18] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области в эпоху её присоединения к Российской империи, СПБ., 1852, с.536; М.В елили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/.

[19] Նույն տեղում:

[20] А. Бакиханов, Гюлистан_и Ирам, Баку, 1991, с. 82_83.

լեռնաշխարհի մնացյալ թուրքերից։ Հենվելով այրումների շրջանում տարածված ավանդություններից մեկի վրա՝ հեղինակը հնարավոր է համարում եզրակացնել, որ դարեր առաջ այրումների նախնիներն առանձնացել են Առանը բնակեցրած մյուս հիմնական էթնիկ խմբերից[21]։ Նա իր ենթադրության մեջ ժամանակաշրջան չի նշում, իսկ այս վարկածը շտապում է կապել «այրում» անվան ստուգաբանության հետ. թյուրքական լեզուներում առկա է «այրըմ» բառը, որը նշանակում է «բաժանում», «առանձնացում»։ Ք. Քարաքաշլին ենթադրում է, որ այրումների ինքնավանումն առաջացել է հենց պատմական բաժանման հետևանքով[22]։

Սակայն մեր կարծիքով այս վարկածը թերի է, քանի որ հեղինակը խոսում է լեռնաշխարհի թյուրքերի ու այրումների ֆիզիկական ու կենցաղային տարբերությունների մասին՝ ակնարկելով այրումների ոչ թյուրքական ծագման մասին։ Միաժամանակ իր կողմից որպես պատմական փաստ ընդունված ավանդության մեջ նշվում է բնիկ առանցիների ու նրանցից առանձնացած խմբի մասին, հետևաբար դեպքերը պիտի տեղի ունեցած լինեին մինչև Առանի թյուրքացումը։ Այդ դեպքում բնիկ խմբի կողմից թյուրքական «այրըմ» ինքնանվանման ընտրությունը անտրամաբանական է ստացվում։

Բոլոր դեպքերում կրկնենք Ք. Քարաքաշլիի դաշտային ուսումնասիրության ընթացքում արձանագրված ուշագրավ պատմությունը, որը մի կողմից՝ որոշ չափով լույս է սփռում այրումների ծագման վրա, մյուս կողմից էլ՝ մատնացույց անում նրանց խառը ծագման բացահայտման դժվարությունները, միգուցե՝ նաև դրա անհնարինությունը։ Այրումներին այցելած հեղինակին 1804 թ. ծնված մի ծերունի պատմել է, թե իրենց երակներում մի քանի ազգերի արյուն է հոսում. տեղի է ունեցել շատ մեծ միախառնում, և այրումների երակներում հոսում է հայկական, լեզգիական, պարսկական ու թյուրքական արյուն, իսկ իրենք մուսուլման -այրումներ են[23]։

Այրումներին ուսումնասիրած ադրբեջանցի պատմաբան Ա. Ալեքպերովը նրանց ծագումը կապում է աղուանական էթնոսի և եկվոր թյուրքական տարրի համախմբման հետ[24]։ Ընդ որում, նրա կարծիքով՝ միջնադարում այրումների բնիկ նախնիները եղել են հայկական էթնոսի մշակութային, լեզվական ու կրոնական ուժեղ ազդեցության տակ և ձուլվել են հայերի հետ։ Սակայն 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո հայերն ու աղուանները բաժանվեցին 2 խմբի՝ միաբնակության կողմնակիցների և դրա հակառակորդների։ Վերջին խմբին Քաղկեդոնի ժողովից հետո սկսեցին անվանել «հայ հոռոմ», որպիսի անվան հետ էլ Ալեքպերովը կապում է «այրում» բառի ծագումը[25]։ Նրա կարծիքով՝ հայերեն նախնական բառը դարերի ընթացքում աղավաղվել է, մոտեցել թյուրքական արտասանությանն ու դարձել «այրում», վերջինս էլ նոր էթնիկ

---

[21] В. Кобычев, Айрумы(К вопросу о происхождении этнонима),_ СЭ, 1962, № 3, с. 140.

[22] Նույն տեղում։

[23] В. Кобычев, Айрумы(К вопросу о происхождении этнонима),_ СЭ, 1962, № 3, с. 141.

[24] А. Алекперов, У айрумов, Изд. общества обследования и изучения Азербайджана, № 5, Баку 1928, с. 240.

[25] Նույն տեղում։

միախառնումների ենթարկված, թյուրքախոս և մուսուլման դարձած բնակչության համար դարձել է ինքնանվանում։

Պատմաբան Վ. Կոբիչևը մասամբ մերժում է, մասամբ էլ՝ հաստատում Ալեքպերովի առաջ քաշած վարկածը։ Նա նույնպես «այրում» բառի ծագումը կապում է «հայ հոռոմ» եզրույթի հետ, սակայն այրումների ծագումն ու էթնանվան առաջացումը պայմանավորում է ոչ թե Քաղկեդոնի ժողովով, այլ 591 թ. Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի երկրորդ բաժանմամբ[26]։ Ըստ Կոբիչևի՝ բաժանման գծի բյուզանդական սահմանային հատվածում 7-րդ դարում առաջացել են «ռում» անվան հետ կապված տեղանուններ, որոնք ժամանակի ընթացքում թյուրքացվել են։ Որպես օրինակ բերվում են Ուռում-բազար և Խեյրում տեղանունները, որոնք հեղինակը ստուգաբանում է որպես «հռոմեական շուկա» և «հայ հոռոմ»։ Սահմանային այս հատվածի հայերին ու հայկական ազդեցությամբ ձուլված աղուաններին անվանել են հայ -հոռոմ, որը նշանակել է բյուզանդահպատակ հայ։ Կոբիչևը եզրակացնում է, որ այրումները պատմական Աղոսւանքի և Հայաստանի միջև սահմանային շրջանների հայերի ու աղուանների հետնորդներն են, որոնք դարերի ընթացքում իսլամացվել և թյուրքացվել են։ Նրանց բնակության գործառամարզը (արեալը) ժամանակի ընթացքում որոշ չափով տեղափոխվել է դեպի արևելք[27]։

Այրումների ծագման վարկածները շատ են։ Դրանք ունեն ինչպես հատման եզրեր, այնպես էլ ակնհայտ հակասություններ։ Մեր կարծիքով՝ ամենից ակնհայտ ընդհանրությունն այն է, որ գրեթե բոլոր վարկածների համաձայն այրումների ծագման գործում դեր է կատարել ինչպես եկվոր թյուրքական տարրը, այնպես էլ տեղաբնիկ էթնոսը։ Դժվարություն է ներկայացնում թյուրքական տարրի հայտնվելու ճշգրիտ ժամանակի որոշումը և «այրում» էթնանվանման ծագման միակ ճշգրիտ տարբերակի բացահայտումը։

Հայտնի է այրումների շրջանում Այսրկովկասից Ատրպատական զանգվածաբար անցնելու երկու փուլ։ Ժողովրդագետ Մ. Վելիլին նշում է, որ դրանցից առաջինը տեղի է ունեցել 14-րդ դ. վերջին։ Ատրպատական տեղափոխված այրումները Շահ Աբբասի օրոք մտել են շահսևանների ցեղային միության մեջ[28]։ Երկրորդ արտահոսքը տեղի է ունեցել 19-րդ դ. առաջին կեսին։ 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով Իրանը Ռուսական կայսրությանը զիջեց Այսրկովկասի վերջին տիրույթները։ Իրանի գահաժառանգ Աբբաս Միրզայի կոչով Արաքս գետից հյուսիս բնակվող թյուրքական որոշ ցեղեր անցան գետից հարավ, որտեղ ստացան նոր կեցավայրեր ու արոտավայրեր։ Այրումների մի մասն անցնելով Ատրպատական՝ բնակություն հաստատեց Ավաջիքի շրջանում (պատմական Արտազ գավառի արևմուտք)[29]։

---

[26] В. Кобычев, Айрумы (К вопросу о происхождении этнонима), с. 145.

[27] Նույն տեղում, էջ 145-148։

[28] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/ .

[29] ĀYRĪMLŪ (in Persian often Āyromlū), Turkic tribe of western Azerbaijan, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc 2, p. 151-152.

Այրումների բնակության հիմնական արեալը Արևելյան Այսրկովկասի հյուսիս-արևմտյան հատվածն է, որը 19-րդ դարի վերջում մտնում էր Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ: Այստեղ էլ պահպանվել են Այրում անունով որոշ բնակավայրեր: Նահանգի Ելիզավետպոլի գավառի Այրում (Ղարա- Մուրադ Այրում) բնակավայրում 1886 թ. տվյալներով բնակվում էր ավելի քան 2000 բնակիչ, որոնք վիճակագրական տվյալներում նշված են որպես թաթարներ[30]: Այրումների էթնանունն առկա է նաև Ղազախի գավառի Ղուշչու- Այրում համայնքի պարագայում, որի բնակիչների թիվը կազմում էր 612 մարդ[31]:

Արևելյան Այսրկովկասի խոշոր ցեղային միավորումներից մեկն էին *շահսևանները*, որոնք մեծ դեր են ունեցել երկրամասի էթնիկ գործընթացներում: Ի տարբերություն շատ այլ թյուրքական ցեղերի՝ նրանց մասին բազմաթիվ, թեպետև հակասական տեղեկություններ են պահպանվել: Այս ցեղամիությունը միավորում էր թյուրքական ծագմամբ ցեղերի, որոնց մեծամասնությունը կապված էր Շահ Աբբասի ժամանակաշրջանի ղզլբաշների հետ, թեպետ պատմագիտության մեջ չկա միասնական մոտեցում շահսևանների ծագման և այդ գործընթացի ժամանակաշրջանի վերաբերյալ: Շահսևանների՝ որպես ցեղային միության ձևավորվելու ժամանակաշրջան նշվում են 16-18-րդ դարերը:

19-րդ դարում շահսևաններին ուսումնասիրած հետազոտողները ներկայացնում են նրանց շրջանում տարածված իրենց ծագման միևնույն ավանդապատումը: Ըստ այդ պատումի՝ Յունսիր փաշա անունով անձը իր քոչվոր ցեղի հետ Փոքր Ասիայից գաղթել է Պարսկաստան և շահից ապաստան խնդրել: Պարսից շահը նրան բարեհաճությամբ ընդունել է և թույլ տվել իր ցեղի համար քոչի վայր ընտրել: Յունսիր փաշան ի վերջո կեցավայր է ընտրել Արդաբիլը[32]:

Անգլիացի պատմաբան, պետական ու ռազմական գործիչ Ջոն Մալքոլմն իր «Պարսկաստանի պատմություն» աշխատության մեջ նշում է, որ Շահ Աբբասը ցանկանում էր հակակշիռ ստեղծել ապստամբ ղզլբաշական ցեղերի ու նրանց անհնազանդ առաջնորդների դեմ և այդ նպատակով հիմնեց սեփական ցեղային միությունը, որն անվանեց Շահսևան: Շահ Աբբասը նոր միություն հրավիրեց ցանկացողներին բոլոր ցեղերից՝ խոստանալով նրանց իր բարեհաճությունն ու պաշտպանությունը[33]: Շահսևանների թիվը շատ արագ աճում էր, նույնիսկ պատահել է, որ մեկ օրում որպես շահսևան գրանցվել է 10 հազար մարդ[34]:

Այլ վարկածի համաձայն՝ Շահսևան անվանումը տիտղոս էր, որը ժամանակ առ ժամանակ տրվում էր քոչվոր ցեղերին՝ նրանց հավատարմությունը շահին

---

[30] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

[31] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Казахский уезд, Тифлис, 1893.

[32] R. Trapper, Shahsevan in Safavid Persia, – BSOAS, Vol. 37, № 2, London, 1974, p. 331.

[33] J. Malcolm, The History of Persia: From the Most Early Period to the Present Time, London, 1829, p. 369.

[34] Ջ. Մալքոլմը շահսևան անունը թարգմանում է որպես «շահի ընկերներ», սակայն ավելի ստույգ՝ թյուրքական ծագմամբ այս բառը նշանակլում է «շահին սիրող»:

մատնանշելու համար: Ընդ որում, այն տրվում էր ոչ միայն թյուրքական, այլև քրդական և իրանական ծագմամբ որոշ ցեղերի, սակայն տվյալ պրակտիկան 17-րդ դարում հատկապես կիրառվում էր ղզլբաշական թյուրքական ցեղերի դեպքում[35]: Մասամբ այս վարկածի օգտին է խոսում Վլ. Մինորսկու թարգմանած ու վերլուծած Թազքիրաթ ալ-Մուլուք երկում դեռ Շահ Աբբասից առաջ Shahi-sevan ցեղերի հիշատակվելը: Նշվում է, որ նրանք պահանջում էին պետության ղեկավար պաշտոններին նշանակել իրենց առաջնորդներին և հաճախ շահի ներկայությամբ գժտվում էին. Թահմասպ Ա-ն փորձեց բարեփոխել այս համակարգը և կարգի հրավիրել ըմբոստ ցեղերին, սակայն դա հաջողվեց անել միայն Շահ Աբբաս Ա-ին[36]:

Բ.Բալայանի կարծիքով՝ շահսևանների հիմնական զանգվածը կազմում էին առանձին ղզլբաշական տոհմացեղային խմբեր, որոնց մի մասը մասնակի կամ լիակատար դեֆորմացիայի էր ենթարկվել[37]: Թյուրքական լեզվի միմյանց նման խոսվածքներով, ծագմամբ ու կենցաղով այս խմբերը, առանձնանալով իրենց նախնական ցեղերից, Շահ Աբբասի հրավերով միանում էին նոր ձևավորվող Շահսևան միավորմանը: Բ. Բալայանի բնորոշմամբ՝ Շահ Աբբասը փաստացի նոր ցեղախումբ էր ձևավորում, որի ցեղապետը դառնում էր հենց ինքը՝ Շահը[38]: Հայտնի է, որ Շահ Աբբասը Մուղանում բնակեցրել է շահսևանների բազմաթիվ ընտանիքների[39]: Հետագայում շահսևանները մեծ դեր են խաղացել Մուղանի շրջանի քաղաքական պատմության մեջ:

Հավանաբար, սկզբնական շրջանում «շահսևան» անունը ցեղային պատկանելություն չի մատնանշել, այլ եղել է տիտղոս, հատուկ անուն, որը ցույց էր տալիս տվյալ՝ որոշակի անունով ցեղի հավատարմությունը Սեֆյան շահին: Ղզլբաշական ցեղերի շրջանում իրենց հավատարիմ ցեղերին «շահսևան» տիտղոսը տալով՝ Պարսից շահերն ամրապնդում էին իրենց իշխանությունը՝ նույն ղզլբաշական մի շարք հզոր ցեղերի իշխանական նկրտումների հաճախակի ապստամբությունների պայմաններում[40]: Հետագայում արդեն այդ ցեղերը միավորվել են «շահսևան» անունով ցեղային միավորման մեջ ու որոշ ժամանակ պահպանել են իրենց նախկին ցեղային անվանումները: Սակայն շահսևանների միությունը կայուն չէր ու անընդհատ համալրվում էր: Հայտնի է, օրինակ, որ այրումների մի մասն անցել է Պարսկաստան և Շահ Աբբասի կողմից ստացել է «շահսևան» անունը: Հետագայում այրումներն արդեն շահսևաններ անվան տակ անցել են Այսրկովկաս և տարածվել նախ Մուղանում,

---

[35] R. Trapper, Shahsevan, – Encyclopaedia Iranica, 2010. http://www.iranicaonline.org/ articles/shahsevan .

[36] Tadhkirat Al Mulük: Manual of Safavid administration. Persian text in facsimile, Translated and explained by V. Minorsky, London, 1943, p. 30.

[37] Б. П. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, – «Արեւելագիտական ժողովածո», I, Եր., 1960, էջ 348:

[38] Նույն տեղում, էջ 351:

[39] История Азербайджана, т. I, с. 266.

[40] Կարելի է հիշատակել թեկուզ Թեքելյու ցեղը, որը բազմիցս ապստամբել էր Սեֆյան շահերի դեմ, այնուհետև նորից ներում ստացել ու նորից ընդվզել: (տե՛ս И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI – нач. XIX в., Ленинград, 1949, с. 57).

այնուհետև՝ Արևելյան Այսրկովկասի այլ շրջաններում[41]: Շահսևաններին միացած ցեղերի թվում հիշատակվում են նաև խոշոր Ինալլու, Բեկդիլլի, Իլխիչի ցեղերը[42]:

Շահսևան ցեղային միության ներսում անդադար ընթացող էթնիկական համախմբման արդյունքում նախկին ցեղային պատկանելությունն աստիճանաբար տարրալուծվել է, և սկսել է գերակայել «շահսևան» ինքնանվանումը: Այս իրողությունը արդեն 19-րդ դ. ուսումնասիրողների մի մասի մոտ այն կարծիքն է ստացել, որ շահսևանները հենց սկզբից միասնական ցեղ կամ ցեղախումբ են եղել:

Ռուս ժողովրդագետ Ն. Զեյդլիցը 19-րդ դ. երկրորդ կեսին շահսևաններին հիշատակում է որպես Բաքվի նահանգի զգալի թվաքանակով թյուրքական ցեղի: Ըստ նրա՝ շահսևաններն ամռանը բնակվում էին Արդաբիլի մոտակայքում, իսկ ձմռանը 3490 վրաններով քոչում դեպի Մուղանի դաշտ[43]:

Երկար ժամանակ շահսևաններն ազատ անցնում էին Իրան, այնուհետև վերադառնում Ռուսական կայսրության տիրապետության տակ գտնվող Արևելյան Այսրկովկաս: Սակայն նրանց քոչվորական կենսակերպը վնասում էր շրջանում գյուղատնտեսության զարգացմանը: Բացի այդ՝ հաճախակի էին նստակյաց բնակչության բնակավայրերի վրա հարձակումները հենց շահսևանների կողմից: Ռուսական իշխանության պահանջով 1830-1860-ական թթ. Իրանի տիրակալները փորձում էին կարգ ու կանոն հաստատել Մուղանի դաշտավայրի իրենց ենթակա հատվածում, սակայն՝ անհաջող, և քոչվորների սահմանային ասպատակությունները շարունակվում էին[44]: Ի վերջո, 1880-1885թթ. ցարական իշխանությունը քոչվոր մնացած շահսևանների մեծ մասին վերջնականապես վերաբնակեցնում է Ատրպատականում:

Արևելյան Այսրկովկասի շահսևանները բաժանվում էին 3 մասի, դրանցից յուրաքանչյուրն էլ բաժանվում էր երեքական տոհմի[45]:

19-րդ. դարի երկրորդ կեսին շահսևանների մի մասը նստակյաց կենցաղ էր ընդունել ու բնակվում էր Լենքորանի գավառի (ուեզդի) հյուսիսի, Արաքս գետի արևելյան ափի թաթարական գյուղերում: Զեյդլիցը Բաքվի գավառում հիշատակում է Ահմեդլու և Ղուլամ- Մահմուդ գյուղերը, որոնք բնակեցված էին շահսևաններով[46]:

19-20-րդ դարերի սահմանագծին Արևելյան Այսրկովկասում եղել են բազմաթիվ տեղանուններ ոչ միայն Շահսևան անունով, այլև այն ցեղերի անուններով, որոնք տարբեր ժամանակաշրջաններում մտել են շահսևանների կազմի մեջ: Մասնավորապես Շահսևան, Բեյդիլլի, Ինալլու, Իլխիչի անուններով բնակավայրեր

---

[41] Г. Д. Агаев, Данные этнотопономии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – Этническая ономастика, Москва, 1984, с. 146.

[42] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/.

[43] Н. К. Зейдлиц, Этнографический обзор Бакинской губернии, Приложение к Кавказскому календарю на 1871 г., приложение, с. 49.

[44] R. Tapper, MOḠĀN (or Dašt-e Moḡān, also Muqān), a lowland steppe in Azerbaijan, – Encyclopaedia Iranica, http://www.iranicaonline.org/articles/mogan-parent-i-ii.

[45] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана, с. 37.

[46] Н. К. Зейдлиц, Этнографический обзор Бакинской губернии, с. 50.

հիշատակվում են Շամախիի, Ջևաթի, Ղուբայի, Լենքորանի, Գյոքչայի գավառներում[47]: 1886 թ. վիճակագրական տվյալներում Ելիզավետպոլի նահանգի Ջեբրայիլի գավառում հանդիպում է Շահսևան գյուղական համայնքը, որի բնակիչների թիվը կազմել է 736 մարդ[48]: Շամախիի գավառում հիշատակվում է Շահսևան բնակավայրը և նշվում է, որ դրա 58 բնակիչները քոչվորներ են[49]:

Կենգերլի ցեղի ծագման պատմությունը մի քանի վարկած ունի: Ժողովրդագետ Ի. Շոպենը Կենգերլի անունը կապում է օղուզական Քանլը ցեղի հետ, որոնցից սերել են նաև ռուսական պատմագրության մեջ հայտնի պեչենեգները: Հեղինակը կենգերլիների յուրահատուկ դիմագծերը՝ կապույտ աչքեր և բաց գույնի մազեր, դիտում է որպես նրանց հյուսիսային ծագման ապացույց[50]:

Մ. Վելիլին պնդում է, որ կենգերլիներն Այսրկովկաս են եկել դեռ արաբական տիրապետության շրջանում և արաբները նրանց օգտագործել են Ատրպատականում ապստամբությունները ճնշելու համար: Հեղինակը ներկայացնում է կենգերլիների ծագման վերաբերյալ մի քանի ավանդապատումներ: Դրանցից մեկի համաձայն՝ ցեղն առաջացել է «կանկար» կամ «խանգար» բույսի անվանումից: Սովի ժամանակ թյուրքական ցեղերից մեկը սնվում էր այդ բույսի վայրի պտուղներով, ինչի համար էլ կոչվեց խանգար. Այսրկովկասում խանգարները բաժանվեցին խմբերի, որոնցից ամենակարևորը և մեծը Կենգերլի ցեղն էր, իսկ ավելի փոքր խմբերից էին կարա-փափախները կամ կարա-բյուրքները և ջահրլիները[51]:

Մեկ այլ տեսակետի համաձայն էլ կենգերլիներն առանձնացել են հզոր ու հայտնի Ուսթաջլու ցեղից[52]: Կենգերլիները տեղափոխվեցին Արաքս գետից հյուսից, երբ այդ տարածաշրջան եկան ուսթաջլուները[53]:

Սեֆյան պետության ժամանակաշրջանում կենգերլի ցեղը ազդեցիկ է եղել հատկապես Նախիջևանում, որը դարձել էր այս ցեղի բնակության հիմնական վայրը: Ի. Շոպենը 19-րդ դ. առաջին կեսում գրված իր աշխատության մեջ նշում է, որ Նախիջևանի շրջանում կենգերլիների թիվը 6473 էր[54]: 16-ից մինչև 19-րդ դ. սկիզբ Նախիջևանի հաքիմի (ղեկավարի) պաշտոնը պատկանում էր Կենգերլի ցեղին և փոխանցվում էր սերնդից սերունդ[55]: 18-րդ դ. կեսից նրանք արդեն խանի տիտղոս էին

---

[47] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/ ; Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[48] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

[49] 2 Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[50] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, с. 537

[51] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/.

[52] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 132.

[53] KANGARLU, a Turkic tribe of Azerbaijan and the Qom-Verāmin region of central Persia, – Encyclopaedia Iranica, Vol. XV, Fasc. 5, p. 495.

[54] И. Шопен, Исторический памятник состояния Армянской области, с. 538

[55] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 104.

կրում[56]: Սեֆյանների պետության մի մասը կազմող Նախիջևանի գոտում կենգերլի ցեղի ազդեցիկության մասին են վկայում պաշտոնական հրամանագրերում եղած վկայությունները: Մասնավորապես 1605թ. Շահ Աբբաս Ա-ն Նախիջևանի կառավարիչ Մաքսուդ Սուլթան Կենգերլիին հրամայում է տեղահանել Ջուլֆայի հայերին: Պարսից շահերի առանձին ֆերմաններ վերաբերում են հատուկ Կենգերլի ցեղին: Այսպես՝ Պարսկաստանի տիրակալ Քերիմ խանը 1753 թ. ֆերմանով Ալի Մուհամմադ բեգ Կենգերլուին հաստատում էր որպես Կենգերլի ցեղի առաջնորդ, նաև որպես Կենգերլի էլի (վարչա-տարածքային միավոր) վաքիլ (ներկայացուցիչ)[57]: 1770 թ. Քերիմ խանն իր մեկ այլ ֆերմանով Կենգերլի ցեղի առաջնորդ և Կենգերլի էլի ղեկավար էր հաստատում մահացած Ալի Մուհամմադ բեգի որդուն՝ Քարիմ սուլթան Կենգերլիին: 1773 թ. Քերիմ խանը Լութֆ Ալի բեգ Կենգերլիին նշանակում է Նախիջևանի իշիկակասիբաշի (գլխավոր արքունի)[58]:

Ղարաբաղի խանության հիմնադրումից հետո Փանահ խանը կենգերլիների մի մասին տեղափոխել է իր խանության տարածք, որտեղից էլ նրանք տարածվել են Արևելյան Այսրկովկասում: Մասնավորապես, Ղուբայի Ֆաթհ Ալի խանը Ղարաբաղի խանության վրա հարձակումների ժամանակ իր հետ տանում էր նաև բնակչության մի մասին: Այդպես Ղուբայի շրջանում ձևավորվել են կենգերլիների հետ կապված Ջաղաթայ, Կենգերլի, Ղոփանի գյուղերը[59]: Նույն Ղուբայի գավառի հարավում 19-րդ դ. կեսին հիշատակվում է Այգյունլի գյուղը, որը նաև կոչվում է Կենգերլի. նույն ժամանակաշրջանում Ղազախի գավառում նշվող Վերին ու Ստորին Սալաքլի և Սոֆուլլու գյուղերը վերագրվում են Կենգերլի ցեղին[60]: 19-րդ դ. վերջին Բաքվի նահանգի Ղուբայի գավառում հանդիպում ենք Կենգերլի անունով գյուղի[61]: Շամախիի գավառի Կենգերլու գյուղն ուներ 206 բնակիչ[62]:

Մուղանլու անունով ցեղային միությունը միավորում էր քոչվոր և կիսաքոչվոր թյուրքական ցեղերի, որոնք բնակվում էին մեծ մասամբ Մուղանի դաշտում: Մուղանլու էր կոչվում նաև շահսևանների ցեղային միության ցեղերից մեկը, որը բաղկացած էր 300 վրանից[63]: Ըստ երևույթին, մուղանլուների մի մասը ժամանակին մտել էր ավելի մեծ և հզոր Շահսևան կոնֆեդերացիայի մեջ: 18-րդ դ. սկզբին նկարագրելով Սալյանի գավառը՝ ցարական բանակի մայոր Ի. Գերբերը նշում է այնտեղ և իրանական սահմանից այն կողմ բնակվող շահսևանների ու մուղանլուների մասին: Նրա

---

[56] Նույն տեղում, էջ 133:

[57] Тбилисская коллекция персидских фарманов, том II, с. 84.

[58] Նույն տեղում:

[59] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 37.

[60] Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края, т. II, Тифлис, 1887, с. 43, 220.

[61] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[62] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[63] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 38.

վկայությամբ՝ շահսևաններն ու մուղանլուները ձմռանն իրենց ընտանիքներով ու անասուններով գալիս էին Սալյան և խոտի համար նշանակված հարկերը մուծելով ձմեռում այդ շրջանում[64]:

Խոսելով Զաքաթալայի մոտ բնակվող թյուրքական մուղանլու ցեղի մասին՝ Վ. Մինորսկին նշում է, որ այն, հավանաբար, այդտեղ էր տեղափոխվել Մուղանից[65]: Նույն Զաքաթալայի օկրուգում 19-րդ դ. վերջում հիշատակվում են մուղալները, որոնց թիվն անցնում էր 21 հազարից[66]: 1887 թ. նրանք հայերի հետ միասին հիշվում են որպես Ելիզավետպոլի նահանգի Արեշի գավառի 2 գլխավոր ժողովուրդներից մեկը[67]: 19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Ջևաթի գավառում հիշատակվում է Մուղանլու բնակավայրը[68]: Ջեբրայիլի գավառի Մուղանլու գյուղում բնակվում էր 138 մարդ[69]: Նույն ժամանակաշրջանում Մուղանլու գյուղ կար նաև Ղուբայի գավառի հարավում[70]: 1886 թ. ընտանեկան ցուցակներում Բաքվի նահանգի Ջևաթի գավառում նշված է Մուղանլու քոչվորական համայնքը՝ 2576 անդամներով[71]: Շամախիի գավառում էլ հիշատակվում է Մուղանլու գյուղական համայնքը՝ 494 բնակիչներով[72]:

Թեքելյու թյուրքական ցեղը հանդիպում է նաև Թեքլա անունով: Ի. Պետրուշևսկին թեքելյուներին համարում է թուրքմենական Թեքե ցեղի ճյուղավորումներից մեկը, որն Իրանական Ատրպատական և Այսրկովկաս է եկել Փոքր Ասիայից[73]: Ավելի վաղ՝ 11-րդ դարում, թուրքմենական թեքե ցեղը սելջուկների գլխավորությամբ ներխուժել էր Փոքր Ասիա: Սելջուկյան սուլթանության կործանումից հետո Փոքր Ասիայի հարավ-արևմուտքում Անթալյա կենտրոնով հիմնվել էր Թեքե բեյլիքը (իշխանությունը), որը հայտնի է նաև Համիդյանների բեյլիք անունով[74]: Այս ինքնուրույն իշխանությունը գոյություն է ունեցել 1321-1423թթ.[75]: Նրա կործանումից հետո Թեքելյու ցեղի մի մասը

---

[64] И. Гербер, Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728, – В кн.: История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы. Под ред. М. О. Косвена и Х. М. Хашаева, Москва, 1958 (далее – ИГЭД), с. 100-101.

[65] В. Ф. Минорский, История Ширвана и Дербенда X-XI веков, Москва, 1963, с. 128.

[66] Л. П. Загурский, Этнологическая классификация кавказских народов (Извлечено из рукописнаго труда). Приложение к Кавказскому календарю на 1888 г., с. 10.

[67] Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края, т. VII, Тифлис, 1887, с. 145.

[68] Նույն տեղում, էջ 359:

[69] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

[70] Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края, том II, Тифлис, 1887, с. 234.

[71] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

[72] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[73] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 48.

[74] İ. H. Uzunçarşılı, Anadolu beylikleri ve Akkoyunlu, Karakoyunlu devletleri, TTK, Ankara, 1969, s. 62.

[75] Tekeoğulları, Merkezi Antalya olan Türkmen beyliği (1321-1423), – Islam ansiklopedisi, 1988-2013, cilt 40, s. 347.

մնաց Փոքր Ասիայի հարավում և կազմում էր տեղի քոչվոր թուրքմենական ցեղերի մի հատվածը[76]: Ցեղի մի մասն էլ անցավ Իրան: Թեքելյուն թյուրքական առաջին ցեղերից էր, որ միացավ Սեֆյանների շարժմանը: Թահմասպ Ա շահը 1540 թ. Շիրվանը հպատակեցնելուց հետո Թեքելյու ցեղին ու նրա առաջնորդ Ղազի խանին շնորհեց քոչվորության համար հարմար Շիրվանի մի քանի շրջաններ, մասնավորապես Սալյանն ու Մահմուդաբադը[77]: Սակայն Թեքելյու ցեղը նաև ամենահաճախն էր ապստամբում Սեֆյանների դեմ: Ի վերջո, 1596 թ. շահական հրաման արձակվեց այս ցեղին գլխովին կոտորելու մասին: Նրանց մեծ մասը կոտորվեց, իսկ ողջ մնացածները մտան այլ ցեղերի կազմի մեջ[78]:

Գ. Գեյբուլանի պնդմամբ՝ 19-րդ դ. վերջում Արևելյան Այսրկովկասում բնակվում էին թեքելյու ցեղի շուրջ 30 տասնյակ ճյուղավորումներ[79]: 19-րդ դ. վերջում Այսրկովկասում արված սոցիալ- տնտեսական ուսումնասիրություններում հիշվում են այս ցեղանվան հետ կապված տեղանուններ: Օրինակ՝ Ջևաթի գավառում հանդիպում ենք Թեքլյա անունով 3 բնակավայրի. հայտնի են նաև Ամիրալար- Թեքլյա, Թեքլյա Հաջի Մամեդ Հուսեյն, Թեքլյա Միրզա Բաբա գյուղերը[80]: Լենքորանի գավառում նշվում են Թեքլյա, Թեքլյա Խոլ, Թեքլյա- Աքսագլար բնակավայրերը[81]: 20-րդ դ. սկզբի ժողովրդագետ Մ. Վելիլին հիշատակում է Թեքլյա անունով բնակավայրեր Գյոքչայի, Շամախիի, Ջևաթի, Ղուբայի, Լենքորանի, Ղազախի, Ելիզավետպոլի, Նուխիի գավառներում[82]: 19-րդ դ. վերջին Ջևաթի գավառում նշված են Թեքելյու - Հաջի- Մամեդ- հուսեյն և Թեքելյու- Միրզա- բաբինի համայնքները՝ 1842 բնակիչներով: Նույն գավառի Թեքելյու -Ամիալիլար գյուղը և համայնքի 1657 անդամները նշված են որպես քոչվոր. քոչվորական բնակչություն ունի նաև նույն գավառի Թեքելու համայնքը՝ 4440 բնակչով[83]: Լենքորանի գավառի Թեքելու-Աքսագլար գյուղն ուներ 275 բնակիչ[84]: Շամախիի գավառում հիշատակվում էր Թեքելյու- Սաֆի համայնքը, որի 127 բնակիչները քոչվորներ էին[85]:

---

[76] Tekelü, Safevî Devleti'nin kuruluşunda rol oynayan Türkmen aşiretlerinden biri, - Islam ansiklopedisi, 1988-2013, cilt 40, s. 348.

[77] Б. П. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, с. 336.

[78] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 57; Б. П. Балаян, К вопросу об общности этногенеза шахсевен и кашкайцев, с. 339.

[79] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 37.

[80] Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края, т. VII, Тифлис, 1887, с. 358-359.

[81] Նույն տեղում, էջ 548,608, 704:

[82] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/.

[83] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

[84] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[85] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

Շամլու ցեղի անվանումը ծագում է Շամ տեղանունից, որով նշվում էր Ասորիքի տարածքը: Այս ցեղը սելջուկյան ու մոնղոլական նվաճումներից հետո բնակեցվել էր հենց Ասորիքում: 15-րդ դ. սկզբում շամլու ցեղը վերաբնակեցվել է Իրանում: Ի. Պետրուշևսկին, հիմնվելով «Սիլսիլաթ ան- Նասաբ-ի Սեֆևիյե» (Սեֆյանների տոհմածառը) 17-րդ դարի ձեռագրի վրա, մեջբերում է Շամլու և Ռումլու ցեղերի հետ կապված ավանդազրույցը: Դրա համաձայն՝ Թեմուրը 1402թ. Սեֆյան Շեյխ Հոջա Ալիին վասալական պատկանելության է տալիս Փոքր Ասիայից և Սիրիայից տեղափոխվածների. շամլու և ռումլու ցեղերը գերի են ընկել 1402 թ. Անկարայի ճակատամարտում և Թեմուրը նրանց հանձնել է Սեֆյան շեյխ Հոջա Ալիին[86]:

15-րդ դարի Ակ-կոյունլուների պետության ժամանակաշրջանում շամլուն եղել է այս ցեղամիության հիմնական ցեղերից մեկը: Պաշտոնապես շամլուները չեն մտել Ակ-կոյունլուների կազմի մեջ, սակայն հայտնի է Ակ-կոյունլու տիրակալ Յաղուբի և շամլուների միջև մի միջադեպի մասին վկայող փաստաթուղթը: Հալեպի, Ադանայի և Տարսոնի գոտում քոչող շամլուները սպանում են օսմանյան սուլթանի ներկայացուցչին և դրանով հարվածի տակ դնում ակ-կոյունլուների և օսմանցիների հարաբերությունները: Յաղուբը հրամայում է պատժել շամլուներին, սակայն միջադեպը մի կերպ հաջողվում է հարթել խաղաղ ճանապարհով[87]:

Այսրկովկասում շամլու ցեղը բաժանվում էր 2 ճյուղի՝ Բեկդիլլի և Աբդուլլու: Կուտկաշենի ու Վարդաշենի շրջաններում Շամլի անունով բնակավայրերը, հավանաբար, կապ ունեն շամլու ցեղի հետ[88]: Շամլուների դերը նշանակալիորեն մեծացել է Ակ-կոյունլուների պետության անկումից հետո ձևավորված Սեֆյան Իրանում: Շամլուն դարձել է ղզլբաշական ցեղային դաշինքի հիմնադիրներից մեկը. Պարսից արքունիքում շամլու ցեղի ամիրաները առանձնահատուկ տեղ ու դիրք են ունեցել և մշտապես վայելել են տիրակալի բարեհաճությունը, իսկ Շահ Թահմասպի օրոք շամլուները նույնիսկ համարվել են ղզլբաշական ցեղերից ամենահզորը[89]:

16-րդ դարում Մուղանը գտնվում էր ղզլբաշական ցեղերի՝ այդ թվում նաև շամլու ցեղի տիրապետության տակ[90]: Նույն դարի վերջին Շիրվանի կառավարիչ Աբաս խանը շամլու ցեղի ներկայացուցիչներին Շիրվանում կալվածքներ է տալիս[91]: Շահ Աբբասի օրոք հիշատակվում են Շիրվանում բնակվող շամլու ցեղի ճյուղավորումներ[92]:

---

[86] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 90.

[87] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), The University of Utah press, 1999, p. 197.

[88] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28.

[89] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 92, 100, 192.

[90] R. Tapper, MOḠĀN (or Dašt-e Moḡān, also Muqān), a lowland steppe in Azerbaijan, - Encyclopaedia Iranica, http://www.iranicaonline.org/articles/mogan-parent-i-ii.

[91] А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 102

[92] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 110.

1886 թ. Այսրկովկասի վիճակագրական տվյալներում Ելիզավետպոլի նահանգի Արեշի գավառում հիշատակվում է Շամլու անունով բնակավայրը[93]: Շամլը անունով փոքր բնակավայր նշված էր նաև Բաքվի նահանգի Շամախիի գավառում[94]:

Բայաթ ցեղը նախ Մահմուդ Կաշգարիի, այնուհետև նրանից օգտված Ռաշիդ ադ-Դինի մոտ նշված է որպես օղուզական 24 ցեղերից մեկը: Այն կոչվում էր առասպելական Օղուզ խանի որդիներից մեկի անունով[95]: Ենթադրվում է, որ բայաթ ցեղի առաջին ներկայացուցիչները Իրան և Փոքր Ասիա են եկել սելջուկյան արշավանքների ու տիրապետության ժամանակ: Այդ ցեղի ճյուղավորումները տարածված են եղել ամբողջ Փոքր Ասիայում, Ասորիքում, Իրաքում, Իրանում և Ատրպատականում[96]:

15-րդ դարում բայաթները մտել են Ակ-կոյունլուների ցեղային միության մեջ և կարևոր դեր են խաղացել թուրքմենական այս պետության քաղաքական կյանքում[97]: Ակ-կոյունլուների տիրապետության ժամանակ բայաթ ցեղի ասորիքյան ճյուղի մի խումբ տեղափոխվել է Գյանջա (Գանձակ) և Բարդա (Պարտավ)[98]:

15-րդ դ. վերջին Բայաթ ցեղի 40 հազար ընտանիք միացել է Իրանում իշխանության համար Սեֆյանների պայքարին, դարձել նրանց դաշնակիցը և համալրել ղզլբաշական ցեղերի ցանկը[99]: Հայտնի է, որ Շահ Աբբաս Ա բայաթ ցեղի իշխաններին ու նրանց զորքին տեղակայել է «Ազարբայջան» նահանգում: Արդյունքում նրանց մի մասը բնակություն է հաստատել նահանգի տարբեր շրջաններում[100]: Իրաքում հաստատված բայաթներից էր սերում 16-րդ դարի արևելյան հայտնի բանաստեղծ Մուհամմադ Ֆիզուլին[101]:

Սեֆյան շահ Իսմայիլը բայաթների մի մասին Իրաքից տեղափոխել է հյուսիս և բնակեցրել Շաբրանի ու Դերբենդի շրջակայքում[102]: 1628 թ. Դերբենդը պաշտպանող ու այնտեղ բնակություն հաստատած ղզլբաշ զինվորների թվում նշվում են նաև բայաթները[103]: 16-17-րդ դարերում բայաթ ցեղը հիշատակվում է որպես Շիրվանում ամենալավ արոտավայրերն ունեցող ղզլբաշական ցեղերից մեկը[104]: Ղուբայի Ֆաթհ Ալի

---

[93] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

[94] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[95] Рашид-ад-Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 89-90.

[96] BAYĀT, an important Turkish tribe, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc. 8, p. 882-884; F. Sümer, Bayatlar, – Islam ansiklopedisi, cilt 1, 1988-2013, s. 373- 390.

[97] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 185.

[98] F. Sümer, Bayatlar, – Islam ansiklopedisi, cilt 1, 1988-2013, s. 390.

[99] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 92.

[100] BAYĀT, an important Turkish tribe, – Encyclopaedia Iranica, Vol. III, Fasc. 8, p. 882-884.

[101] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 185.

[102] А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 95. Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28.

[103] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 140.

[104] Նույն տեղում, էջ 311:

խանը օգնության ու հովանավորչության խնդրանքով կայսրուհի Եկատերինա Բ-ի մոտ է ուղարկում Դերբենդից Միրզա բեգ Բայաթին[105]:

19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում նշված է Բայաթ- Մելիք-Ումուդ համայնքը 433 բնակչով[106]: Նահանգի Ղուբայի գավառում Բայաթ անունով մեծ գյուղական համայնքը, որն ընդգրկում էր 10-ից ավելի գյուղեր և ուներ 1719 բնակիչ[107]: Շամախիի գավառի Բայաթ- Նազիր Հուսեյն գյուղն ուներ 46 բնակիչ, իսկ Բայաթ- Աղբուլաղ գյուղը՝ 103[108]:

Թյուրքական *Ալփաուտ* ցեղի մուտքն Առաջավոր Ասիա՝ աղբյուրներում հիշատակված չէ, ուստի դժվար է ասել՝ ալփաուտները տարածաշրջան են քոչել սելջուկյա՞ն, թե՞ մոնղոլական արշավանքների ընթացքում: Այս ցեղն իր հզորության և ազդեցիկության գագաթնակետին է հասել Կարա-կոյունլուների թուրքմենական պետության շրջանում: Ալփաուտները Կարա-կոյունլուների ցեղային միության հիերարխիկ կառույցում համարվում էին ամենահզորներից մեկը, իսկ այս պետության պարտությունից հետո Ակ-կոյունլու Ուզուն Հասանի օրոք Ալփաուտ ցեղը մտավ մեկ այլ թուրքմենական՝ Ակ-կոյունլուների պետության և քոչվորական էլիտայի մեջ[109]:

Գ. Գեյբուլաևի դիտարկմամբ՝ հաստատված չէ, թե այս ցեղի ճյուղավորումները երբ են եկել Այսրկովկաս[110]: Սակայն ամենահավանական ժամանակահատվածը, թերևս, Սեֆյանների պետության հիմնադրումից հետո է: Հենց նրանց օրոք ալփաուտները որպես ղզլբաշներ քոչավայրեր են ստացել Հյուսիսային Ատրպատականում, Շիրվանում և Ղարաբաղում[111]: Հայտնի է, որ ղզլբաշական ցեղերից 16-17-րդ դարերում Շիրվանում ամենալավ հողատարածքներն ունեին Ռումլու, Ալփաուտ և Բայաթ ցեղերի ներկայացուցիչները[112]: Ալփաուտ ցեղից Շիրվանում հարուստ կալվածքներ ուներ Մանսուր սուլթան անունով Էմիրը[113]:

19-րդ դ. վերջում ամբողջ Այսրկովկասում, նաև երկրամասի արևելքում Ալփաուտ անունով պահպանված բազմաթիվ բնակավայրերը ցույց են տալիս, որ ալփաուտները կազմել են Այսրկովկաս տեղափոխված թյուրքական ծագմամբ բնակչության կարևոր խմբերից մեկը: 19-րդ դ. վերջում Ալփաուտ անունով բնակավայրերը սփռված էին ողջ

---

[105] А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 162.

[106] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[107] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[108] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[109] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 98, 108.

[110] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 30.

[111] Tadhkirat Al Mulük: Manual of Safavid administration. Persian text in facsimile, Translated and explained by V. Minorsky, London, 1943; J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p.184.

[112] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 311.

[113] Նույն տեղում, էջ 210:

Արևելյան Այսրկովկասում[114]: Արեշի գավառի Ալփաուտ գյուղական համայնքում 1886 թ. դրությամբ բնակվում էր մոտ 1500 բնակիչ՝ գրանցված որպես թաթարներ[115]: Ելիզավետպոլի գավառի Ալփաուտ գյուղում բնակիչների թիվը 1886-ին 231 էր[116]: Ղազախի գավառում գտնվող Ալփաուտ գյուղական համայնքը միավորում էր 8 գյուղեր և ուներ 812 բնակիչ[117]: Գյոքչյի գավառում հիշատակված է Աթփաուտ-Մեհթիբեկի գյուղական համայքնը՝ 1549 բնակչով[118]: Շամախիի գավառի Ալփաուտ գյուղն ուներ 273 բնակիչ և գտնվում էր Մարդան բեկի իշխանության տակ[119]: Գ. Գեյբուլլաևի հաշվարկով՝ մինչ խորհրդային կարգերի հաստատումը Կովկասում կար Ալփաուտ անունով 11 բնակավայր[120]:

Ահմեդլի ցեղի վերաբերյալ միջնադարյան հիշատակումները սակավ են: Աբու Բաքր Ալ- Թեհրանիի «Քիթաբ-ի Դիյարբաքրիյա» աշխատության մեջ նշվում է, որ Ահմեդլու ցեղի առաջնորդ Ահմադ բեգ Ահմեդլին Ակ-կոյունլու Ուզուն Հասանի ամենահավատարիմ աջակիցներից էր, իսկ Իսկանդեր բեգ Մունշին հաղորդում է, որ 17-րդ դարում Սեֆյանները Ահմեդլու ցեղին բնակեցնում են Ղարաբաղում[121]: 19-րդ դ. վերջում հատկապես Ջեբրայիլի գավառում Ահմեդլի անունով բնակավայրերը հաստատում են այս տեղեկությունը (հանդիպում են Քոչ- Ահմեդլի, Փիր- Ահմեդլի գյուղերը և Ահմեդլի գյուղական համայնքը՝ 1500 բնակիչներով)[122]:

Նույն ժամանակաշրջանում Արևելյան Այսրկովկասում Ահմեդլի կամ Ահմեդլու անունը կրող բազմաթիվ բնակավայրերը վկայում են, որ այս ցեղը տարածված է եղել այդ ամբողջ տարածաշրջանում: Ելիզավետպոլի նահանգի համանուն գավառում հիշատակվում են Ազար-Ահմեդլի և Քյուրդ-Ահմեդլի գյուղերը, համապատասխանաբար՝ 404 և 144 բնակիչներով[123]: Բաքվի նահանգի նույնանուն գավառում 19-րդ դ. վերջում հիշատակվում է Ահմեդլի գյուղական համայնքը՝ 503

---

[114] Материалы для изучения экономическаго быта государственных крестьян Закавказскаго края, т. VII, с. 11, 180. Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Тифлис, 1893.

[115] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Арешский уезд, Тифлис, 1893.

[116] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

[117] Նույն տեղում:

[118] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[119] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[120] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 30.

[121] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 184.

[122] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джебраильский уезд, Тифлис, 1893.

[123] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

բնակիչներով[124]: Նահանգի Գյոքչայի գավառում հիշվում է 1127 բնակիչ ունեցող Լալա-Ահմեդլի համայնքը, իսկ Ահմեդլի գյուղի դիմաց նշված է «քոչվորական» բնորոշումը, ինչը նշանակում է, որ նրա 118 բնակիչները դեռ քոչվորական կենսակերպ էին վարում[125]:

Աֆշար ցեղի մասին միջնադարում առաջին անգամ իր «Թյուրքական լեզուների դիվանում» (Dīwānu l-Luġat al-Turk) հիշատակվում է Մահմուդ Կաշգարին, որի մոտ այդ անունն է կրում օղուզական 22 ցեղերից մեկը[126]: Աֆշար ցեղը հանդիպում է նաև Ռաշիդ ադ- Դինի օղուզական ցեղերի դասակարգման մեջ, որտեղ դրանք 24-ն են[127]:

Աֆշարները Միջին Ասիայից Մերձավոր Արևելք են տեղափոխվել սելջուկյան արշավանքների ժամանակ: 12-րդ դ. առաջին կեսին քոչվոր աֆշար ցեղը բնակվում էր Իրանի Խուզիստան նահանգում[128]: Այնուհետև մոնղոլական արշավանքների շրջանում նրանք տարածվել են Իրանի այլ շրջաններ, այդ թվում և՝ Ատրպատական: Նրանց մի մասը հաստատվել է նաև Փոքր Ասիայում: 14-րդ դարում աֆշարները հիշատակում են որպես Ասորիքի հյուսիսում, մասնավորապես՝ Հալեպի շրջանում հաստատված թուրքմենների մի մասը[129]:

14-15-րդ դարերում աֆշարների որոշ տոհմեր մասնակցել են Կարա-կոյունլուների պետության ստեղծմանը: Իրանում հաստատված աֆշարներն էլ 15-րդ դարում եղել են Ակ-կոյունլուների պետության քաղաքական կյանքում կարևոր դեր խաղացող քոչվոր ցեղերից մեկը: Մանսուր Բեգի գլխավորությամբ նրանք Ակ-կոյունլուների պետության ղեկավար Ուզուն Հասանի հավատարիմ կողմնակիցներն էին: Նրա գլխավորությամբ աֆշարները մասնակցել են թիմուրյանների դեմ մղված Տիգրիսի ճակատամարտին: Նրանք Ուզուն Հասանի բանակի կազմում են եղել Օսմանյան պետության դեմ 1473 թ. տեղի ունեցած Բաշքենդի ճակատամարտում[130]:

Օղուզական այս ցեղը 14-17-րդ դդ. մշտապես ակտիվ մասնակցել է Առաջավոր Ասիայի մահմեդական պետական կազմավորումների քաղաքական կյանքին: Կարա-կոյունլուների և Ակ-կոյունլուների ժամանակաշրջանի ավարտից հետո աֆշար ցեղն արդեն հանդես է գալիս որպես Սեֆյան պետության հենարան ղզլբաշական սկզբնական ու հիմնական ցեղերից մեկը[131]: Աֆշար ցեղից էր 1736-1747 թթ. գահակալած Նադիր շահը: Նադիրը աֆշարների Քըրքլու կամ Քըրքլի տոհմից էր և

---

[124] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Бакинский уезд, Тифлис, 1893.

[125] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[126] P. Oberling, Afsar, – Encyclopaedia Iranica, I/6, p. 582-586.

[127] Рашид-ад-Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 89-90.

[128] F. Sümer, Avşar, - Islam ansiklopedisi, cilt 4, 1988-2013, s.160.

[129] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 183; F. Sümer, Avşar, - Islam ansiklopedisi, cilt 4, 1988-2013, s. 161.

[130] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 183.

[131] Tadhkirat Al Mulük: Manual of Safavid administration, p. 14; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 48.

սկիզբ դրեց Իրանում Աֆշարների դինաստիային, որը նրա մահից հետո իշխանության ղեկին մնաց միայն Խորասանում[132]:

Ի. Պետրուշևսկու կարծիքով՝ աֆշարների մի մասին Այսրկովկասում բնակեցրել են Թեմուրն ու Միրանշահը: Ժողովրդագետ Մ. Վելիլին նշում է, որ Արևելյան Այսրկովկասում բնակություն է հաստատել Քըրքքլը տոհմը, ինչն արտացոլվել է համապատասխան տեղանունների անվանումներում: Ելիզավետպոլի գավառի Քըրքքլը գյուղական համայնքի Քըրքքլը և Քովլար գյուղերում 1886-ին գրանցված էր 2300 բնակիչ[133]: 19-20-րդ դարեի սահմանագլխին Քըրքքլը անունով բնակավայրեր կային Ղուբայի և Ջևաթի գավառներում[134]: 1886 թ. տվյալներով Բաքվի նահանգի Ղուբայի գավառում կար Քըրքլը գյուղական համայնքը՝ 309 բնակչով[135]: Խորհրդային Ադրբեջանի տարածքում Քըրքքլը անունով բնակավայրեր են նշվել Խանլարի, Կասում-Իսմայիլովի և Թովուզի շրջաններում: Աղջաբեդիի շրջանի Ուզեյիրիքենդ բնակավայրը նախկինում կոչվում էր Աֆշար: Այս խոշոր ցեղի Գյունեշլի տոհմի անունով բնակավայրեր կան ներկայիս Ադրբեջանի Դիվիչիի և Խաչմասի շրջաններում[136]: Աֆշարների տոհմերից մյուսի՝ Իսալլու կամ Ասիլլու տոհմի անունով էր կոչվում ներկայիս Ջալիլաբադ քաղաքը[137]:

Ղաջար ցեղը մեծ դեր է ունեցել Իրանի քաղաքական կյանքում: Այս ցեղի ներկայացուցիչ Աղա Մուհամմադ-խան Ղաջարը 1796 թ. Իրանում հիմնադրեց ղաջարների շահական դինաստիան: Ղաջարներն ակտիվ դերակատարություն են ունեցել նաև 16-18-րդ դդ. Այսրկովկասի էթնիկ գործընթացներում, նաև երկրամասի քաղաքական կյանքում: Ա. Բաքիխանովը և Ի. Պետրուշևսկին, հիմնվելով Աբդ ուռ-Ռեզակ Դոմբուլիի «Մաասիր ի Սուլթանիյե» («Սուլթանների հիշարժան գործերը») 1825 թ. հրատարակված ձեռագրի վրա, ներկայացնում են ղաջար ցեղի ծագման ավանդապատումը: Դրա համաձայն՝ ցեղի անունը ծագել է նրա հիմնադիր Ղաջար իշխանի անունից: Այս ավանդության համաձայն՝ ղաջար ցեղն առաջացել է 2 մոնղոլական՝ ջալայիր և սուլդուզ, և 1 տիբեթական՝ թունգութ, ցեղերի բեկորների միացումից[138]: Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների շրջանում Հուլաղու խանը ջալայիրների 200 հազար ընտանիքների բնակեցրել էր Պարսկաստանում: Հետագայում Թեմուրը Գանձակում, Ղարաբաղում ու Երևանում բնակեցրեց Փոքր Ասիայից ու Ասորիքից բերված 50 հազար ընտանիքների: Դրանք հիմնականում այն

---

[132] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 45; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 137.

[133] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Елисаветпольский уезд, Тифлис, 1893.

[134] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/ .

[135] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[136] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 27.

[137] Նույն տեղում, էջ 28:

[138] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 95; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 172.

ղաջարների հետնորդներն էին, որոնք Հուլաղուի օրոք ջալայիրներ անունով բնակեցվել էին Պարսկաստանում և ժամանակ առ ժամանակ անցնում էին Անատոլիա և Ասորիք[139]: Ղաջարները մասամբ Արևելյան Այսրկովկաս են տեղափոխվել նաև Թեմուրի որդի Միրանշահի օրոք[140]: Մեկ այլ վարկածով՝ նախահայր Ղաջար Նոյինը եղել է իլխանների դինաստիայից Արղուն խանի աթաբեկը. ըստ այս վարկածի՝ նա նաև Թեմուրի նախահայրն է համարվում[141]:

Ղաջարների ցեղային հիշողության վրա հիմնված երկու ավանդազրույցների իսկությունն ամբողջությամբ դժվար է հաստատել, սակայն այս պարագայում կարևորն այն է, որ երկու դեպքում էլ ղաջարների ծագումը կապվում է մոնղոլների հետ: Նրանց հայտնվելը Իրանում Փոքր Ասիայում և Ասորիքում ևս նույնացվում է մոնղոլական արշավանքների հետ: 15-րդ դարում ղաջարներ եղելե են Ակ-կոյունլու ցեղային միության ցեղերից մեկը[142]: Արդեն 16-րդ դարում նրանք հանդես են գալիս որպես Սեֆյան տիրակալների հենարան ղզլբաշական ցեղային միության հիմնադիր 7 (որոշ տարբերակներում՝ 8) ցեղերից մեկը[143], ապա հիշատակվում Սեֆյան շեյխ Իսմայիլի 7 հազարանոց սկզբնական զորքում, որը նրա գլխավորությամբ 1500 թ. արշավեց Շիրվան[144]:

Ղաջարներից էին սերում Երևանի և Գյանջայի (Գանձակի) խաները[145]: Գանձակի ղաջարական Զիյադ օղլի խանական տոհմն իշխեց մինչև ռուսական տիրապետության հաստատումը: Այսրկովկասում ղաջարների բնակությունից հետո հայտնի է նաև, որ Շահ Աբբասը Գյանջայից տեղահանում և Աստրաբադ է տեղափոխում ղաջարների 30 հազար ընտանիք[146]: Սեֆյանների օրոք ղաջարներից էին սերում Հայաստանի և Շիրվանի շատ կառավարիչներ ու պաշտոնյաներ, ինչի արդյունքում դաղստանցիները ընդհուպ մինչև 19-րդ դ. կեսը քամահրաբար ղաջար էին անվանում Այսրկովկասի բոլոր բնակիչներին[147] (Այսրկովկասի բնակիչներ ասվածն, անշուշտ, վերաբերում է թյուրքալեզուներին):

Արևելյան Այսրկովկասում 19-րդ դ. ոչ այնքան մեծաքանակ ղաջարների առավել նշանակալի ներկայությունն, ըստ Ա. Բաքիխանովի՝ եղել է Ղուբայի գավառում[148]:

---

[139] М. Велили (Бахарлы), Этнография Азербайджана, http://ethnoglobus.az/; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 82-83, 172.

[140] И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 90.

[141] The Cambridge history of Iran, From Nadir Shah to the Islamic Republic, Vol. 7, Cambridge university press, 1991, p. 104.

[142] J. Woods, The Aqquyunlu (clan, confederation, empire), p. 195.

[143] Tadhkirat Al Mulük: Manual of Safavid administration, p.194; И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении, с. 90.

[144] The Cambridge history of Iran, From Nadir Shah to the Islamic Republic, Vol. 7, Cambridge university press, 1991, p. 106.

[145] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 29; А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 82-83, 173.

[146] А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 173.

[147] А. Бакиханов, Гюлистан-и Ирам, с. 173.

[148] Նույն տեղում, էջ 22:

19-րդ դ. վերջում Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում նշվում է Ղաջար գյուղը 36 թաթար բնակիչներով[149]: Ղաջար անունով բնակավայր կար նաև նույն նահանգի Ղուբայի գավառում՝ 72 բնակիչներով[150]: Ուշագրավ է, որ Շամախիի գավառում հիշատակվող Ղաջար գյուղի բոլոր 225 բնակիչները եղել են հայեր[151]: Ջալայիր անունով բնակավայր հիշատակվում է Զաքաթալայի օկրուգում, որի 204 բնակիչներից 190-ը թաթարներ էին, 14-ը՝ ավարներ[152]:

Խալաջ ցեղին հանդիպում ենք 13-րդ դ. պատմիչ Ռաշիդ ադ- Դինի մոտ: Ներկայացնելով առասպելական Օղուզ խանից սերված 24 օղուզական ցեղերը՝ նա հիշատակում է նաև նրան միացած եղբայրներին ու զարմիկներին, որոնցից յուրաքանչյուրի անունով մեզ հայտնի են թյուրքական ցեղեր: Պատմիչը մասնավորապես հիշատակում է ույղուր, քանլը, ղըփչաղ, կարլուկ, աղաչերի ցեղերին և մեզ հետաքրքրող խալաջը[153]: Օղուզական ավանդապատումից կարելի է ենթադրել, որ այդ ցեղը կամ ժողովուրդն ուներ թյուրքական ծագում և միացել էր օղուզներին մինչև նրանց արշավանքները դեպի արևմուտք: Ռաշիդ ադ- Դինը շարադրում է նաև օղուզական Խալաջ ցեղի ծագման ավանդապատումը: Դրա համաձայն՝ Օղուզ խանը գրավում է Սպահանը, այնուհետև ցանկանում վերադառնալ: Ճանապարհին մի կին երեխա է ունենում: Երեխան սնունդի բացակայության պատճառով քաղցած է մնում: Կնոջ ամուսինը սկսում է որսով զբաղվել և հետ է մնում Օղուզ խանի մարդկանցից: Խանը զայրանում է և դիմում նրան՝ քալ աչ (թյուրքական լեզուներով՝ մնա՛ քաղցած): Այստեղից այդ մարդու տոհմը ստացել է Քալաջ կամ Խալաջ անունը[154]:

Խալաջների մասին հաղորդում ունի նաև 13-րդ դ. արաբ պատմիչ Իզ ադ- Դին իբն ալ-Ասիրը: Ըստ նրա՝ Մահմուդ Ղազնևին 1005 թ. իր կողմն է գրավում խալաջական թյուրքերին, որոնց հետ շարժվում է Բալխի վրա[155]: Արաբ պատմիչը հիշատակում է նաև Խորեզմշահ Ջելալ ադ-Դին Մանկբուռնայի ամիրաներից մեկին, որը սերում էր խալաջ-թյուրքերից[156]:

Միջնադարում խալաջները մեծ դեր են խաղացել Միջին Ասիայի, Աֆղանստանի և Հնդկաստանի քաղաքական կյանքում: 11-րդ դ. սելջուկյան արշավանքների շրջանում խալաջների մի մասը տեղափոխվել է Իրան և Առաջավոր Ասիա: Չնայած

---

[149] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[150] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[151] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Шемахинский уезд, Тифлис, 1893.

[152] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Закатальский округ, Тифлис, 1893.

[153] Рашид ад Дин, Сборник летописей, т. I, кн. I, с. 76.

[154] Նույն տեղում, էջ 85:

[155] Ибн ал-Асир, Ал-камил фи-т-та’рих (Полный свод истории), Ташкент-Цюрих, 2005, с. 179.

[156] Նույն տեղում, էջ 378:

իրենց զգալի թվին՝ խալաջները վերջնականապես ձևավորված ցեղային գիտակցություն չեն ունեցել[157]:

Նրանք հանդես չեն եկել որպես քաղաքական ինքնուրույն միավոր, ինչպես, օր.՝ ղզլբաշական ցեղերը, կամ Ակ-կոյունլուների դաշինքի մաս կազմող թուրքմենական ցեղերը: Խալաջները հիմնականում ընկալվել են որպես իսլամադավան տիրակալների, ամիրաների (էմիրների) վարձկան զինվորական ուժեր: Մոնղոլական արշավանքների շրջանում խալաջները խորեզմշահերի դաշնակիցներն էին, և մոնղոլների հաղթական արշավանքների ճնշման տակ նրանց մի մասը ևս տեղափոխվել է Իրան, այստեղից՝ նաև Այսրկովկաս[158]:

17-րդ դարում ճանապարհորդները խալաջներին հիշատակում են որպես Մուղանի դաշտի բնակիչներ[159]: Արևելյան Այսրկովկասում 19-րդ դ. վերջին պահպանվել էին Խալաջ անվան հետ կապված բազմաթիվ տեղանուններ[160]: 1886թ. Այսրկովկասի վիճակագրական տվյալներում Բաքվի նահանգի Գյոքչայի գավառում նշված է Խալաջ գյուղը՝ 544 բնակիչներով, որոնք գրանցված են որպես թաթարներ[161]: Խալաջ անունով ավելի մարդաշատ 2 գյուղեր՝ 1617 և 1190 բնակչով, հանդիպում ենք նաև Ջևաթի գավառում[162]: Ընդ որում՝ դրանցից մեկի թաթար բնակչությունը ներկայացված է որպես քոչվոր: Բաքվի նահանգի Ղուբայի գավառում հիշատակում էր Խալաջ գյուղը 636 բնակչով[163]: Լենքորանի գավառում հանդիպում ենք Խալաջիլու գյուղը 517 բնակչով[164]:

Այսպիսով՝ պատմական Առանի և Շիրվանի տարածքն ընդգրկող Արևելյան Այսրկովկասում թյուրքական տարրը մեծ ծավալով հայտնվել է սկսած 11-րդ դարի սելջուկյան արշավանքներից: Այս ալիքը նոր թափ է ստացել 13-րդ դարի մոնղոլական արշավանքների ընթացքում: Սակայն երկրամասում թյուրքական տարրի ամենածավալուն ներկայությունն ու քաղաքական աղդեցությունը ուժեղացել է սկսած 14-15-րդ դարերից, երբ տարածաշրջանը գտնվում էր Կարա- կոյունլու, այնուհետև Ակ-կոյունլու թուրքմենական պետությունների տիրապետության տակ: Այս շրջանում տվյալ երկու ցեղային համադաշնությունների թյուրքական շատ քոչվոր ցեղեր

---

[157] Kalaj, Tribe originating from Turkistan. Generally referred to as Turks but possibly IndoIranian, - Encyclopaedia Iranica, Vol. XV, Fasc. 4, p. 363-364.

[158] E. Konukçu, Halaç, – Islam ansiklopedisi, 1988-2013, cilt 15, s. 229.

[159] Г. А. Гейбуллаев, Топономия Азербайджана (историко-этнографическое обозрение), с. 28; Kalaj, Tribe originating from Turkistan, p. 363-364.

[160] Г. Д. Агаев, Данные этнотопономии о расселении тюркоязычных племён в Азербайджане XI-XV вв., – Этническая ономастика, Москва, 1984, с. 143.

[161] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Гёкчайский уезд, Тифлис, 1893.

[162] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Джеватский уезд, Тифлис, 1893.

[163] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Кубинский уезд, Тифлис, 1893.

[164] Свод статистических данных о населении Закавказского края, извлечённых из посемейных списков 1886 года, Ленкоранский уезд, Тифлис, 1893.

բնակություն հաստատեցին Արևելյան Այսրկովկասում։ Իսկ գործընթացն իր գագաթնակետին հասավ արդեն թուրքմենական երկու պետություններին հաջորդած Սեֆյան Իրանի տիրապետության շրջանում՝ 16-17-րդ դարերում, երբ Մուղանի դաշտը գրեթե ամբողջությամբ, նաև Շիրվանի զգալի տարածքներ բնակության տրվեցին նախկին Ակ-կոյունլու և Կարա-կոյունլու ցեղային համադաշնությունների մեջ մտած, այնուհետև ղզլբաշների կազմը համալրած քոչվոր ցեղերին։

Ուսումնասիրելով Արևելյան Այսրկովկասում թյուրքական ցեղերի բնակության դինամիկան՝ կարելի է արձանագրել մի հետաքրքիր օրինաչափություն։ Քոչվոր ցեղերի մեծ մասը, եկած լինեն սելջուկյան, մոնղոլական արշավանքների, թե ավելի ուշ շրջանում, անցել են նախ՝ Ատրպատական և վերջապես՝ Արևելյան Այսրկովկաս։ Այս տեղաշարժն առակ է եղել Թեքելյու, Շամլու, Բայաթ, Աֆշար և բազմաթիվ այլ ցեղերի դեպքում։ Ընդ որում՝ քոչվոր ցեղերի նման տեղաշարժերի ժամանակ ցեղն ամբողջությամբ չի տեղափոխվել, այլ միայն՝ դրա մի մասը։ Թերևս, դրանով է պայմանավորված Արևելյան Այսրկովկասի և Իրանական Ատրպատականի, մասամբ նաև Թուրքիայի թյուրքական ծագմամբ բնակչության որոշակի էթնիկ ընդհանրությունը և միևնույն ցեղերի անուններով բնակավայրերի առկայությունը։